

ՄԵՆԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻՓՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Քիֆիլիում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тафлис, редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Ստորագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունւում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկի. Տ է Լ է Ֆ օ ն № 253.

ԲՈՎԱՆՆԱԳՈՒԹՅՈՒՆ

Հողերի յետ գնելը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Կառավարիչ սենատի նիստը. Հայ ժողովրդական և եկեղեցական երգերը. Թատրոն և երաժշտութիւն. Բազուի աղէտի զոհերի օգտին. Զիար գելուում հրկիզանների օգտին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ:

ՀՈՂԵՐԻ ԾԵՏ ԳՆԵԼԸ

Հողային խնդիրը, որ միշտ եղել է մեր երկրի ամենախոշոր և կարևոր խնդիրներից մէկը, այժմ առանձին նշանակութիւն է ստացել և զարձեղ է ոչ միայն հերթական, այլ և անչեղած գիւղի:

Մենք ունենք երկու տեսակ գիւղացիներ՝ պետական և կալուածատիրական: Պետական գիւղացիները, որոնք բնակված են պետական հողերի վրա, միատեսակ ապահովութիւն չունեն: Նրանց մէջ շատ կան սակաւահող գիւղացիներ, որոնց համար գիւղական հողը այլ ևս անկարող է հայթայթել ապրուստի միջոցները: Այդ գիւղացիները ստիպված են լրացնելու իրանց տարեկան հաշուեկալի պակասորդը կողմնակի եկամուտներով, կամ կապալով վերցնելով իրանց գիւղերին մօտ գտնւած ապուստ հողերը, կամ ձեռնարկելով երանգան արեւմտեաների ու պարսպաններին: Մեր և կամ վերջապէս պանդխտութեան դիմելով դէպի քաղաքները և գործարանները:

Ինչ վերաբերում է կալուածատիրական գիւղացիներին, նրանց դրութիւնը երկարատիկ աւելի ծանր է և անխորժ, ուղղակի նրանք որոշ հողային պարտավորութիւններով կապված են հողատէրերի հետ և անկարող են վայելել այն ազատութիւնը, որ ունեն պետական գիւղացիները: Ընդէն է, 40 տարի սրանից առաջ վարստանի գիւղացիները ստացան ազատութիւն, իսկ 30 տարի սրանից առաջ մեր երկրի «մուսուլմանական» կոչված նահանգներում հրատարակվեցին միւլքադարական և դանազանատեսակ կալուածատիրական գիւղացիների համար կանոններ, սակայն գիւղացիները հողային սուրբ վերաբերութեամբ մնացին նոյն վիճակի մէջ, ինչպէս առաջ: Իսկ ընդհանրապէս նրանց դրութիւնը աւելի վատացաւ, որովհետեւ գիւղացիների թիւը մեծացաւ, իսկ կալուածատիրական հողից այլ ևս յաւելումներ չարկեցին գիւղացիների օգտին:

Եւ անհամար անգէս եկաւ մի այսպիսի դրութիւն: Գիւղացին իրապէս մշակում է թէ այն հողը, որ նրան տրված է իբրև հողաբաժին և թէ այն հողը, որ դուրս է այդ բաժնից, վճարելով վերջինին համար այն կապալագինը, որ կը սահմանէ կալուածատէրը: Առաջ այդ կապալագինը փոքր էր և երբեմն շատ անշահալ. բայց ժամանակի ընթացքում նա մեծացաւ և մի քանի տեղերում այնպէս է բարձրացել, որ նա դարձնում է գիւղացու աշխատանքը բոլորովին անարդիւն:

Մեր գիւղացիները, մտածելով թէ ներկայի և թէ ապագայի մասին և երկիւղ կրելով, որ ժամանակով հողի կապալագինը աւելի կը բարձրանայ, նպատակաշարժար են գտնում այնպիսի միջոցներ մշակել, որոնք զարմնէին հողը գիւղական համայնքի սեփականութիւն: Այդ միտքը հասունացել է բաւականաչափ և շատ տեղերից լսվում է ցանկութիւն, որ պետութիւնը միջոցներ տայ գիւղացիներին յետ գնելու թէ այն հողերը, որոնք իբրև հողաբաժիններ են տրված և թէ այն, որոնք լինելով հողաբաժիններից դուրս գտնվում են նրանց մշակական տրամադրութեան տակ:

Այդ նպատակներին հասնելու կարող է լինեն ծառայել հող յետ գնելու այն միջոցները, որոնք ընդունված են պետութեան ներքին նահանգներում: Պետութիւնը պէտք է օգնէ այդ գործին, յատկացնելով պետական գանձարանի միջոցներից խոշոր գումար այդ նպատակի համար: Դա մեր երկրի կենսական պահանջներից մէկն է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ն

Կովկասեան փոխարքայի ապրիլի 1-ի հեռագրի առիթով «Новое Время» լրագրը հետևեան է գրում:

Այն կոչի մէջ, որ փոխարքան հեռագրով ուղղեց Կովկասի ազգայնականութեան՝ երևում է անկեղծ ցանկութիւն ձեռք առնել խաղաղացման այսպիսի միջոցներ, որոնք արդիւնաւորութեան վրա կարելի է յոյս դնել: Գարեթի է կանգ առնել կովկասեան զենամտօ տալու և կենտրոնի ապագայ բարենորոգութիւններին նրան մասնակից դարձնելու մասին—այս միջոցներ նշանակութիւնը բոլորովին հասկանալի է և նրանց օգտակարութիւնը վէճի չէ կարող ենթարկվել: Բայց շատ տեսակետներով հետաքրքրական է ուշադրութեամբ կանգ առնել մի հարցի վրա, որ համարվում էր երկրորդական, իբրև մէկը հանգուցեալ Պէճէի դրոժ դրած բարձրութիւ վարչական միջոցներից՝ խառնակութիւնը դադարեցնելու նպատակով, բայց որ մեծացաւ, զարգացաւ և դարձաւ մի ռազմական, բարդ և սուր առիթ շփոթութեան, այսինքն այն խառնակութեան, որը այնքան ապարդիւն կործով աշխատում էին դադարեցնել: Մեր խօսքը հայոց եկեղեցու կայքերի արքունական կառավարութեան յանձնելու հարցի մասին է: Այստեղ մի շարք կանոններ և ակամայ սխալներ գործվեցին: Նախ և առաջ այս ձեռնարկութեան իբրև հիմք ծառայեց հասարակ դէպի այն անտեղի և դատարկ անասիւր, իբր թէ հայոց եկեղեցին անգին դրամագրութիւնը ունի, որոնք գործ են զրկվում մի ընդարձակ դաւադրութիւն սարքերով: Մեծ Հայաստանը վերահասնելու, հայ ժողովրդական պատերազմի համար և այլն: Հայոց եկեղեցական գումարների վերաբերումը չը լինելով, կարող էին այսպիսի լուրեր առաջ գալ, և քանի որ չէր կարելի նրանց ստուգել կամ հերքել ուստի ծագեց այն երևակայական վտանգը, որի դէմ կուրու համար գործ զրկեցին այնքան միջոցներ և ծուռ ուղղված ոյժեր: Համարձակ կարելի է ենթադրել, որ իթէ այս գործի նախաձեռնողը գիտեմար, որ հայոց եկեղեցու իսկական կայքը կազմում է մի համաստ գումար, միլիոն չորս հարիւր հարյուր ռուբլի—որ աւելի քիչ է քան որ և է նախաձեռնողը գործի կարողութիւնը—նա կը գզուշահար այն գործողութիւններից, որոնք ձանաչվեցին և ընդունվեցին իբրև հալածանք հայոց ժողովրդական եկեղեցու դէմ: Միւս կողմից այն իրողութիւնը, որ մեր կենտրոնական կառավարութիւնը այսքան կոպիտ կերպով խաբւեց մի գործում, որը կարելի էր ստուգել ցոյց է տալիս թէ ինչպատճառի պէտք է լինէին այն բարոյական մոլորութիւնները, որոնց կարող էր ենթարկվել և յիբաւի ենթարկվում էր այդ կառավարութիւնը: Վերջի վերջոյ մենք հասնեք այն ցաւալի հետևանքին, որ կուրու իբրև երևակայական վտանգի դէմ՝ հէնց մարմնացրինք, իրականացրինք այդ վտանգը: Այն գաղափարները, որոնք ծագում էին քաղաքական կասկածոտութիւնից՝ կենքի մէջ արծարծվում էին հէնց այն գործիչներին ձեռքով, որոնց կոչումն էր կուրու այդ գաղափարների դէմ, և սրանց արձարծվելը բերվում էր իբրև փաստա կուրու շարունակելու համար:

Պէտք է սրան վերջ դրվի, և փոխարքայի հրատարակած ծրագրով յայտնապէս առաջին բային է արված դադարեցնելու այս անսովոր ներքին կուրու:

Այս նպատակները, ինչպէս ասացինք, գրված է «Новое Время» լրագրում, այն լրագրում, որ ամենից շատ արժանութեան, երևակայական դաւադրութեան մասին և ամենից թուր կերպով պաշտպանում էր մեր եկեղեցական կալուածները անհերք հրաժարութեան միտքը, սարսափելի սպառնալիքներ տեղադրելով հայ հոգեւորականու-

թեան, ինտելիգենցիայի և ժողովրդի զլին: Ուրիմն այսօր նոյն լրագրը հերքում է այն՝ ինչ որ քարոզում էր սրանից դու մի տարի առաջ, և դատապարտելով անհեռատես քաղաքական գործիչների անհիմն և ֆասսակար գործողութիւնը դատապարտում է և ինքն իրան...

ԿԱՌԱՎԱՐԻՉ ՍԵՆԱՏԻ ՆԻՍՏԸ

Գանձակի հայկական անկազգութիւնների գործը

Ապրիլի 1-ին Կառավարիչ Սենատի քրէական վճարողի ղեկարտածմանը ընկնում էր այն գործը, որով մեղադրվում էին Յովհաննէս Բաղդասար, Մեծուղ Մարտիրոսեան, Գրիգոր Մուրադեան, Դադար Առաքելեան, Համարձակ Բալասանեան, Սամուէլ Իսայեան, Սիմէոն Մակվեան և ուրիշ շատերը պատժական օրէնքի 263 և 265 յօդուածներին մէջ նախատեսված յանցանքի համար, այսինքն այն բանի համար որ նախապէս իբրև մէջ և ուրիշ շատերի հետ համաձայնութիւն կայացնելով, որ չը թող տան գործադրել 1903 թւի յունիսի 12-ի օրէնքը հայ-ուսաւորչական եկեղեցու կալուածները և դրամագրութիւնները այդ եկեղեցու հոգեւորականութեան ձեռքից առնելու և արքունական կառավարութեան յանձնելու մասին, —նրանք գտնվելով անազին զինված ամբոյսի մէջ, ցոյց տուին բացարձակ դիմադրութիւն, միացած բնութեաների և անկարգութիւններին հետ, ոստիկանութեան պաշտօնեաներին, ձիււոր ստորաժողովներին և թերի տուած երկու վաշտ զինուորներին:

Նախագահում էր սենատոր Բեյրուսի, ղեկուցանում էր սենատոր Գոսուովսկի, եղբակցութիւններ անում էր օրեր-պիտիւրքի օգնական Կիմպէ: Վճարողի գանգատը պաշտպանում էր երդուեալ հաւատարմատար Օ. Գրուզդեբը:

Հայկական անկազգութիւնները պատկերը, ինչպէս նա պատմված է Քիֆիլի դատաստանական պալատի վճռի մէջ, ներկայանում է հետևեալ կերպարանքով:

1903 թ. օգոստոսի 29-ին, վաղ առաւօտեան, Գանձակ քաղաքում հայոց նոր եկեղեցու յուզվէ զանգահարութեամբ սկսեցին ժողովել քաղաքի երկրորդ մասում ապրող հայերը: Բոլոր առևտրական հիմնարկութիւնները և արհեստանոցները այդ օրը, հակառակ սովորութեան, փակված մնացին: Քաղաքապետ ոստիկանի այն հարցին թէ ինչ է սա նշանակում, որ անչեփահաս պատանիները պատասխանեցին. «Այսօր ուսուները պիտի խլեն եկեղեցական կալուածները»: Իսկ քաղաքի առաջին մասում, ուր գտնվում էին խառնութիւնները և արհեստանոցները, ստիպամբ պատանիները մէջ և նրա մօտ խմբված էր հայերի հարգարարումը: Ոստիկանութիւնը հարց ու փորձ էր անում, բայց հայերը անորոշ պատասխաններ էին տալիս: Ոստիկանապետը դրանց նահանգապետի պաշտօնակատար Անդրէիկի մօտ, որ և կարգադրեց կանչել դէպքի տեղը երկու վաշտ զինուոր Ալանաբուրգեան գնդից: Մինչ այդ, հայերը, որոնք արդէն մի քանի հարյուր հոգի էին, աղաղակներով և երգերով դիմեցին դէպի հայոց հին մայր եկեղեցին, որի մօտ գտնվում են հայոց հոգեւոր կառավարութիւնը և յաջորդ թինիկ վարչապետի բնակարանը: Ընտանաբնակ երկու պրիստաներ ոստիկաններով: Նրանք պահանջեցին ցրվել, բայց ամբողջ ուշադրութիւն չը դարձրեց և շարունակեց առաջ գնալ, և այդ ժամանակ էլ մի քանի աւելի ետանդոտ ոստիկաններին հարուածներ հասցրելու քարերով և բռունցք-

ներով: Երբ ամբողջ մօտեցում էր հայոց հին մայր եկեղեցուն, ոստիկանապետի հրամանով նրան մօտեցան ստրաժնիկները, որ ցրվին: Ամբողջ աղաղակներով յարձակվեց նրանց վրա, թափելով քարեր կարկուտ և փայտեցրեց նրանց մինչև փողոցի վերջը: Մօտեալով եկեղեցական տան, ամբողջ «վարդապետ դուրս եկ» աղաղակելով, սկսեց, չը սպասելով դուրս գալու, քարեր արձակել դէպի տան մուտքը և պատուհանները: Բենիկ վարդապետը և հոգեւոր կառավարութեան անդամները դուրս եկան բնակարանի առջևի պատուհանը: Ամբողջ արկովում էր և նրա միջից լսվում էին ձայներ. «չը դաւաճանի», «կալուածը մերն է», «եկեղեցին մերն է», «չը տալ» և այլն: Վարդապետը դիմեց ամբոյսի մի ճանով, որ, ըստ երևոյթի, բարեյաջող տպաւորութիւն թողեց հայերի վրա, այնպէս որ ճանի վերջում արդէն լսվում էին ծափահարութիւններ և «ուռա» աղաղակներ: Ինչպէս ասում է Բենիկը, իբ ճառը այսպիսի բովանդակութիւն ունէր. «Ոչ ոք մեզանից չէ խլում եկեղեցիները, ընդհանրապէս, կառավարութիւնը հովանաւորում է մեր եկեղեցուն: Աղաչում եմ ձեզ հետեւալ: Իսկ ինչպէս ասում են հայ վկայները, Բենիկը ճանի բովանդակութիւնը դանազան տեսակ էր: Մի քանի վկայներ ցոյց տուին, թէ Բենիկը ձեռք որ հանգստացնում էր ամբողջ, ասում էր, թէ ինքը կը գրէ Կաթողիկոսին, իսկ նա կը խնդրէ թագաւորին և ամեն ինչ կը մնայ անսխալ պէս: Մի քանի վկայներ էլ ցոյց տուին, թէ վարդապետի ճանի բովանդակութիւնը ուրիշ էր: «Գնացէք, մի վարէք, մենք չենք տայ, չենք ստորագրել այն, ինչ ուղում են ուսուները: Հանգստացած ամբողջ պատրաստ էր ցրվելու, երբ հեռուից երևացին երկու վաշտ զինուորներ, որոնց հետ էր և փոխ նահանգապետ Անդրէիկ: Ամբողջ միջից լսվեց աղաղակ. «Մի ցրվէք»: Զինուորները մօտեցան և քառակուսի շարք կազմեցին, փակելով փողոցը: Փոխ նահանգապետ Անդրէիկ գնաց դէպի ամբողջ, որ համոզէ նրան ցրվել: Բայց այդ ժամանակ ստրաժնիկները և ամբոյսի մէջ գտնվողները մէջ տեղի ունեցաւ ընդհարում: Առաջինները կողմից գործի զրկեցին մտրակներ և փայտեր, իսկ երկրորդների կողմից—քարեր և բլվարներ: Ամբողջ, յետ մղվելով ստրաժնիկներից, ստիպված եղաւ ընդհարվել զօրքերի հետ: Զօրքերի առանձին շարքերի վրա քարեր թափվեցին և այդ ժամանակ զինուորներից մէկը, հարուած ընդունելով զլին վրա, ընկաւ ձիուց: Մի և միւս կողմի յուզմունքը սաստկանում էր և վերջապէս զինուորները, չը սպասելով հրամանի, սկսեցին կրակ անել ամբոյսի վրա: Ամբոյսի միջից էլ սկսեցին հրազէն արձակել: Ամբողջ ցրվեց, թողնելով հրապարակի վրա 8 սպանված և 26 վիրաւորված: Ոստիկանութեան և զօրքերի կողմից էլ մի քանի ծանր վիրաւորվածներ և շարքածներ եղան:

Այս բոլոր անցքերի առիթով պատասխանատուութեան ենթարկվեցին 46 մարդ. սրանցից Գանձակի նահանգական դատարանը մեղաւոր ճանաչեց միայն 21 մարդկանց, որոնք դատապարտված են դանազան պատիժների սկսած 9 ամիս բանտարկութիւնից մինչև երկու շաբաթ կալանաւորում ոստիկանութեան մէջ:

Քիֆիլի դատաստանական պալատը, վերաբնակելով այս գործը պիտիւրքի բողոքով, հաստատեց նահանգական դատարանի վճիռը տասը մարդկանց վերաբերմամբ, 23 մարդկանց դատապարտեց, զրկելով կարողութեան իրաւունքից, կալանաւորները ուղղել բաժանմունքի մէջ ձեռքազրկելու 10 կց մինչև 4 ամիս և 8 մարդկանց—բանտարկութեան վերջից մինչև մի ամիս: (Сынъ Отечества)

(Կը շարունակվի)

գրեցում (2ուգրիդի գաւառ) ապրիլի 1-ի երեկոյան Տօրթովայի շախան յարձակեց կալուածատէր իշխան Պլատօն Դադիանու վրա և սպանեց նրան գնդակի մի քանի հարուածներով: Սպանելուց յետոյ հրամայեց ազգականներին չը թողիլ նրա մարմինը:

Սուխումից հաղորդում են, որ Գուրգուտի շրջանում խառնակութիւնները և թաղանջ շարունակվում են: Սամուրզակներում էլ խուժութիւններ սկսվեցին ապրիլի 3-ին: Օկուստ գրեկում կողոպտեցին բոլոր խառնակները: Ապրիլի 6-ին աւազակները հետ հրաձգութիւն սկսեցին, աւազակներից 2 հոգի սպանվեցին, 3 ը վերաւորվեցին:

Թիֆլիսի համալսարանի ընկերութեան ընդհանուր ժողովը որոշել է ներկայ Զատիկի ամօներին բաժանել 365 բուրջի իր խկապէս չքուր անդամներին: Այդ գումարը վերցվելու է աղքատ և ծերացած արհեստաւորներին օժանդակող դրամարկից: Նպատակները տրվելու են Արհեստաւորների ու պարաւայի վարչութեան մէջ համալսարանի անմիջական ցուցումների համաձայն:

«Times»-ը հաղորդում է, որ ռուս կառավարութիւնը պատերիկ է դանիական բանակում աշխուժեցում գործ ածվող միտրայիթողներ: Դա մի շատ թիթեղ է, ընդամենը 21/2—3 ֆունտ ծանրութեամբ, բայց խիստ մահաբեր: Դա հնարել է դանիական մի օֆիցեր: Նա կարող է մի րոպէս 300 հարած հասցնել, որոնցից 225-ը իսկական ոյժ ունեն:

Ներկայումս ներքին գործերի մինիստրութեան մէջ, ստուժ է «Ե. Ե.» լրագիրը, ցուցակագրվում են այն բոլոր անձների անունները, որոնք քրէական կամ վարչական պատիժներ են ենթարկված իրանց կրօնական կամ քաղաքական համոզումներին համար մինչև 1905 թվի վերջի 18 ը: Այդ տեղեկութիւնները ժողովուրդը յետոյ, կը ձեռնարկեն ընդհանուր ամենօրեական կամ ներքին շտաբի միջոցով կազմելու գործին: Այդ ներքին առաջիկայ Զատիկից ու չը պէտք է լինի:

ԳԱՆՁԱԿԻԾ մեզ գրում են: «Անցեալ կիրակի գանձակեցի տիկին Թագուհի Յովնանի սեան Միքայելայից իր հաւաքով ճաշ տուցեց հաղորդող զինուորներին, տեղին գնդերում ծառայող հայերին, թուով ծառ 150 հոգու Ձինուորները շնորհակալութեամբ ընդունեցին տիկինը ճաշը»:

ՇՈՒՇՈՒԾ մեզ գրում են: «Մի քանի օր առաջ մեր բէլայական դպրոցի վարչութիւնը յայտարարեց, որ այն շուշուցիները, որոնք ցանկանում են քննութիւններ տալ VI կամ VII դասարաններին համար, թող անյապագ գնան Բագու կամ Թիֆլիս և այնտեղ խորհրդան դիւրեկատորին: Գննութիւնները կը սկսվին մեծ պատի 6 ըբ շաբթից: Այս յայտարարութիւնից յետոյ VI և VII դասարանիցից շատերը անապարդիւնեցին Բագու: Այսօր մի յայտարարութիւն կարեւորեց զպրոցի պատից կը պարտաւորեց, որով առաջարկում է միւս դասարանների աշակերտներին դպրոց յաճախել: Հետևանքները մասին կը յայտնենք ժամանակին»:

ԳԱՆՁԱԿԻԾ մեզ գրում են: «Ամսի 2-ին մեր դուստրի դահլիճում կայացաւ Գանձակի արեական գիմնազիայի սաների ծնողների ժողովը, որն զբաղվեց դպրոցական ու այլ ընդհանուր բնութագրութիւն ունեցող հարցերով: Տեղի ունեցած վիճարանութիւնից յետոյ ժողովը ընտրեց 12 հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որին պատկերից՝ մանրամասն ծանօթանալ գիմնազիայի կանօնադրութեան, ծրագրի ու մուտքի և ելքի (քիւլշետի) հետ ու որոշել ինչ փոփոխութիւններ են նրանք կարօտ գիմնազիայի ժամանակակից պահանջներին ու մեր երկրի կարիքներին անելի հասպատատեսական գարձներու համար: Յանձնաժողովի եղբակցութիւններին համեմատ ծնողների ժողովը միջնորդութիւն կը յարուցանէ ուր հարկն է գիմնազիայի հիմնովին վերանորոգելու համար: Առ այժմս ամենից շատ պարզ է հասարակութեան ու ուսանող երիտասարդութեան հետեւեալ պահանջը՝ դասախօսել գիմնազիայում պարսպի առարկաները շարքում տեղացիների լեզուները, գրականութիւնը, պատմութիւնն ու աշխարհագրութիւնը: Հասարակութիւնը և ուսանողութիւնը որոշել են յամառաբար պնդել այդ պահանջի վրա»:

ՄԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱՋՄԻ ՇՈՒՐՁ

Նոր նաւերի կառուցումը: «Journal» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հետագրում է, ընս այցիկեցի ծովագետութիւնը իմանալու համար, թէ արդեօք տեղեկութիւններ չը կան ծովագետ Բօժէսովսկուց: Ինձ հաւատացրին, որ ոչինչ տեղեկութիւն չէ ստացված: Սակայն, դրա փոխարէն, ես հետեւալ տեղեկութիւններն ստացայ, որոնց հեղուկեանը ես երաշխաւոր եմ: Վճռված է հրատարակել 750 միլիոն ռուբլու փոխառութիւն: Այդ փողերով կը կառուցվեն 10 կրէյտերներ իւրաքանչիւրը 17 հազար տօնն ծաւալով, 12 զրահակիր կրէյտերներ 14 հազար տօնանոց, 12 զրահպատկրէյտերներ «Բայան»-ի տիպի 8 հազար տօնանոց, 3 հազար տօնանոց 15 էստաֆետային նաւեր, 50 հակահաւանանաւեր 570 տօնանոց, 200 ականանաւեր 350 տօնանոց, 4 հազար տօնանոց մի ակնային նաւ և բազմաթիւ ստորջրայ նաւակներ, մարտանաւեր և այլն: Այդ նաւերի մեծամասնութիւնը պէտք է կառուցվի արասասմանում: Թղթակիցը յոյս է յայտնում, որ պատէւներն առեւծի բաժինը կը հասնի Փրանսիային: (Вирж. Вѣд.)

«Echo de Paris» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ Վլադիվոստոկ քաղաքը գանձարանից 1 միլիոն ռուբլի ստացաւ ուստիսի պաշտօնի գնելու համար ի նկատի ունենալով, որ եւսօրեային կարող են պաշտօնի այդ քաղաքը:

Յարի կամ կորչել: Պարիզից «Вирж. Вѣд.» լրագրին հետագրում են: «Սալոնից հետագրում են, որ «Օրէօր» հիւանդանոց նաւերը ուրիշները թուժելու միջոցով ֆրանսիացի բժիշկ, որին թողարկված է մի քանի ժամ անցկացնել քաղաքում: Բժիշկը պատմում է, որ Բօժէսովսկու միակ նպատակն է ամենակարճ ճանապարհով հասնել Վլադիվոստոկ: Եթէ Վլադիվոստոկ գնաւու ժամանակ ճանապարհին կը հանդիպի թշնամու նաւատորմին, այն ժամանակ ռուս ծովագետը կտրական ճակատամարտ կը տայ, հաւատարիմ մնալով յայտնի կամ կորչել» դէվիդին: Ինչ վերաբերում է կօստր-ծովագետ Նէրօզատովին, նա մնում է մեր գլխաւոր ոյժերի ետեւ որպէս պահեստ օպագոյ գործողութիւնների համար: Օստիւղան կղզիների գնալուց Կէտերից Ամստէրդամի վրայով ապրիլի 2-ին Պարիզում հրատարակված հետագրիւնը միաձայն ասում են, որ մեր նաւերը անցել են այդ շրջանով աշխուժեամբ, առանց որ և է պատահանների: Նոյն աղբիւրներից ստացված տեղեկութիւնները համեմատ, 5 ամխատար փոխադրիչներ սպասում են Բատաւիայում կօստր-ծովագետ Նէրօզատովի դիվիզիայի գլուխը: (Трѳ.)

Կում Օկուստ: «Daily Telegraph» լրագրի թղթակիցը խօսակցել է կում Օկուստի հետ, որը ասել է հետեւալը: «Ստաղդու թեան պայմանները պէտք է կրկին պատերազմ սկսելու հնարաւորութիւնը զրկեն Ռուսաստանին: Ռուսաստանը պէտք է զրկված լինի հնարաւորութիւնից նաւատորմ ունենալ Չինաստանի և Եսպանիայի ափերի մօտ: Պարտ Արուսեան, Վլադիվոստոկը և Սախալինը պէտք է միացվեն Եսպանիային: Եսպանիան յարգանք է պահանջում դէպի իրան: Միջազգային հարցերում պէտք է հարցնել նրա կարծիքը: (С.)

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍՈՒՑ ԳՈՐԴԱԿԱՎՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ապրիլի 8-ի կէսօրվայ ժամը 12 1/2-ին Ս. Սպիրիդոնի տաճարում մագթանք կը կատարվի Հեռուր Արեւելքի ճանապարհին եղած նաւերի աշող ուղևորութեան և պաշտօնանների ստողութեան համար:

10ՆԴՕՆ: «Morn. Post»-ը ասում է, որ եւսպանիները կարող են վստահ լինել իրանց նաւատորմի վրա, բայց անելացնում է, որ Տօգօի և Բօժէսովսկու միջև սպասվում կուր կատակ չէ լինելու: Տօգօի առաւելութիւնը մեծ չէ և պատերազմական պայմաններն այնպէս են, որ նա պէտք է խուսափէ ամեն տեսակ ըրակից և կուր այնպիսի ելքից, երբ եսպանիներն նաւերը, թէ և նոյն իսկ յարթող, ստացած լինեն զգալի փոփոխութիւններ: Ռուսաստանը կարող է իշխել Հեռուր Արեւելքի շրջանում, ուղարկելով իր ծովային մնացած ուժերը: Երկրորդ անգլիական զլխաւոր հիւպատոս լորդ Կրօմբերի պարլամենտին ներկայացրած հաշիւը ցնուութեան ենթարկեց և արժանացաւ հաւանութեան:

Հաշիւը ներկայացնում է Երկրորդ անհամաձայնեալ վիճակում: Հաշի ամենակարեւոր մասն այն է, որ Կրօմբեր խորհուրդ է տալիս ոչինչացնել կազիտուլացիաները, այդ բայը համարելով ամենաբնական հետեւեալ Անգլիայի և Ֆրանսիայի միջև կայացած համաձայնութեան Երկրորդ վերաբերութեամբ: Կազիտուլացիաների համաձայն ամեն մի օրինակից, որը վերաբերում է եւրօպացիներին, պահանջում է 14 օտար պետութիւնների հաստատութիւն: Կրօմբերն առաջարկում է, որ օրէնսդրական իշխանութիւնը յանձնվի Անգլիային:

ՍՕՅԻԱ: Թէ և ուսանողների ցոյցերի և անբաւականութեան պատճառով նոր կանօններ մտցրվեցին, բայց էսպէս ոչինչ չը փոխվեց: Սօցիալիստ նախաձեռնողները պահանջում են ամեն տեսակ քաղաքական սոսօցիալիստների լիակատար ապտուութիւն և ակադէմիական կարծեցեալ ապտուութիւն դասախօսութիւններին յաճախելով՝ երբ ցանկանան: Ռուսանողական խառնակութիւնը սաստիկ է: Ռուսանողները շարք ու փոքր արին «Веч. Почта» լրագրի խմբագրատան պատուհանները:

ՏԱՄԲՕՎ: Տպված է նահանգապետի որոշումը Տամբովի մանկախում ընկերութեան փակման մասին:

ՀՕՆԿՕՆԻ: Այստեղից Սայգօն են ուղարկվում մի և կանայեղներին մեծ պաշար:

ՄԱՆԻՒԱ: Աժխատար նաւերը մեկնեցին Լինգաբինան ծովածոցից: Եսպանական կրէյտերները չը երևանցին:

ԿԱԿՈՒՍՏԱ: «Daily Ex.»-ը տեղեկացել է հեղինակաւոր աղբիւրից, որ Հնդկաստանի գրքերի զլխաւոր հրամանատար լորդ Կիտիները վճռել է հրաժարվել այդ բանակի հրամանատարութիւնից, եթէ որ հնդկական գործերը բարձրագոյն խորհրդի զինուորական անգլիացիները մայրը Էլլիսի իրաւունքները չեն սահմանափակվի հնդկական բանակը ներմուծելով աղբիւրստարով և ֆինանսական կարգեր:

ԲԵՐԼԻՆ: Հարաւարեւմտեան Աֆրիկայում տեղի են ունեցել երկու ընդհարումներ: Գաղութալայերի վարչութեան մէջ միտք է յղակել հետեւ Անգլիայի օրինակին Տրանսվալի գործում և հիմնել իր աֆրիկեան գաղութներում բլօկադալներ, որոնք ծառայելին իր գործողութեան հիմք և զէնքի պահեստ: Բրէսելի շոգենաւային «Ատուա» ընկերութիւնը մտադիր է այնանը հիմնել 6 նաւերով կանօնաւոր երթևեկութիւն Բրէսելից Կ. Պօլիս—Ս. Մովի նաւահանգիստները հանդիպելով—Մարօկիան հարցի առիթով կիսապաշտօնական տեղեկութիւններ կան, որ Ֆլորանսիական լրագիրներին՝ ստուժ լուրերը թէ պետութիւնները մերժել են միջազգային կօսֆէրէցիա հրաւիրելու հարցը, սեպտ է: Այդ հարցի առիթով դեռ ես վճիռ չէ կայացել:

ՄԱՐՏՆՅՅԻ: 30 հոգի ռուս օֆիցեր-ինժեներներ ժամանեցին այստեղ հետեւելու 3 հակահանաւերի և մէկ կրէյտերի համար շոգեկաթանի պատրաստելու աշխատանքներին: 40 հոգի ուրիշ օֆիցերներ գնացին Լասէն, ուր շինվում են այդ նաւերի մարմինները:

ԱՎԻՐ: Երէկ անգլիական արքայական զոյգը ճաշ տուցեց Վիկտորիա և Ալբերտ ըզբօսանաւի վրա, որին մասնակից էր Ալբերտի գնեցրաւ-նահանգապետը: Էրուարդ թագաւորն առաջարկել է Ֆրանսիայի պատուի կինացը:

8 ապրիլի

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 7 ապրիլի: Յիլիպեան կողմից մտերմութեամբ եղած ամերիկական էսկադրայի հրամանատար ծովագետ Տրէյնին հրահանգ է արված խնդարել ռուսներին սարքելու իրանց համար որ և է յինակէտ Յիլիպեան կղզիներին վրա և թող չը տալ նրանց որ և է կերպով խնդարելու չէ գրութիւնը:

ՍՕՅԻԱ, 7 ապրիլի: Կիսապաշտօնական «НОВЫЙ ВѢКЪ» լրագիրը վճռաբար հերքում է աւարիական մամուլի զրպարտութիւնը, որ իրը թէ բլգարական իշխանի իր Բերլին, Լօնդօն և Հոնոն եղած ժամանակը խնդրել է Բլգարիան ճանաչել թագաւորութիւն: Բլգարիան գոհ է իր քաղաքական դրութիւնից և հարկաւոր չէ համարում փոփոխել իր յարաբերութիւնները զբայի պետութիւններին հետ: Բլգարիայում ոչ ոքի չէ անհանգստացնում անուսական վաստաւորութիւնը և իշխանական թագը լիազէս բաւարար է իշխանի արժանապատուութեանը:

ԲԻԳՍ: Գիւղացիական խառնակութիւնները Շուրջալստեան երկրում զգալի չափով կորցրել են իրանց սուր բնաւորութիւնը՝ տեղ-տեղ գործերի ներկայութեան շնորհով, տեղ-տեղ էլ կալուածատերերի սուռած բարեւուրումները:

շնորհով բանւորների և բարակների դրութեան մէջ: Կայացաւ գործարար արած գործարանական բանւորների բազմամարդ ժողով, որն ըրտեց պատուիրակներ գործարանատերերի հետ բանակցելու համար համաձայնութեան գալու և աշխատանքները վերսկսելու մասին:

ԲԻԳՍ, 7 ապրիլի: Այն լուրը, թէ իբր մենք սարքով կողպտու ենք կազմակերպել, որպէս զի սարձանակների ուղարկենք Կիլիսիի, բոլորովին անհիմն է: Սաղանօսակի Կանստէր:

ՀՆԼՄԻՆԳՅՕՐՍ, 7 ապրիլ: Երէկ Գանգէով մեկնեցին 400 գաղթականներ «Աւստրա» շոգենաւի վրա:

ՎԻՆՆԻՑՍԱ, 7 ապրիլի: Ժողովրդական հարբեցողութեան դէպ կուտղ ընկերութեան վարչութիւնը միջնորդում է, որ ցէնզուրայի թոյլատրած բոլոր գրքերը թող տրվեն շրջանաւորութեան ժողովրդական գրադարաններում. դրանց թուժ են հաշւած և մալօրօսերէն գրքերը:

ՆԻԿՕԼԱՅՎ, 7 ապրիլի: Ռուսաստանի հաբաւում կազէմները ծովային կօրպուս հիմնելու են յարգութիւնը մերժված է: Նա կը հաստատվի Պետերբուրգում:

8 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հեռուր Արեւելքից ապրիլի 7-ին պաշտօնական տեղեկութիւններ չեն ստացվել:

ԳԱՆՁՏՈՒԿԻՆ, 7 ապրիլի: Բանակները ճակատում փոփոխութիւններ չը կան: Այստեղ հանգիստ է: Այստեղ այն խառնակները, որ փակված էին Մուկէլիցի մեր նահանջիլու ժամանակ՝ նորից բացվել են վերսկսել առեւտուրը: Աւելի և անելի շատանում են չինացիները: Գալիս է արագ հալոլղ ձիւն: Եղանակը զգալի է:

ԼՕՆԻՕՆ: «Թայմսը» Բօժէսովսկու հասցէին նկատում է, որ եսպանական մամուլը կորցրել է իր սովորական պաղարկեւութիւնը, լսելով ռուսական էսկադրայի Կամբանան ծոցում լինելը, և կարծես օժանդակում է Բօժէսովսկու, ստիպելով Տօգօին թողնել հրկիսում բռնած իր դիրքերը և մօտեցալ այն շրջանը, ուր գտնվում են ուսանող ֆրանսիական յինակետերի մօտ, ուր ռուս նաւերը ապաստան կարող էին գտնել յաղթվելու դէպքում: «Թայմսը», երևակայում է, որ ռուսները նորից անգլիական ծովային առեւտրի դէպ դիրք են բռնել, ցանկանալով Անգլիային ստիպել խառնակութեան պատերազմին և զբանով Ռուսաստանին հնարաւորութիւն տալ պատուաւոր կերպով դուրս գալու ներկայ վատ դիրքից: Պետերբուրգում մի հըզօր կուսակցութիւն ցանկանում է, որ գործերն այդ ելքն ստանան: «Գրաֆիկում» հետեւեալ կարծիքն է տպված: «Բօժէսովսկուին այնպիսի բան արեց, որ ամեն մի էսկադրա համարում էր անհնար: Այդ մեծ քաղաքը ծոթիւնը անօրինակ է. նրա էսկադրան այդ չէր կարող անել, եթէ բոլոր պաշտօնանները խիստ դիպցիլիսիայի ենթարկված չը լինէին, եթէ նաւաւորները վարժված չը լինէին և ինքն էլ բացառապէս հանձարեղ չը լինէր: Եթէ որ Բօժէսովսկուին նոյնքան լաւ կարող է ճակատամարտել, որքան որ նա կարող եղաւ իրան յանձնված նաւատորմը կազմակերպել, այն ժամանակ կարելի է տեսլ, որ նա կարող է կուել Տօգօի հետ: Ռուսաստանն անկասկած իմաստութեամբ վարվեց, հրաժարվելով խաղաղութիւն կըքել նախ քան վերջնական հետեւանքը և իր պատրաստած հնարաւորութեանը: Ինչ հետեւեալ էլ որ ունենայ ծոցային ճակատամարտը, Բօժէսովսկու էսկադրայի լրջալը կը մնայ ծովային պատուութեան էլքերում իբր մի արտակարգ յանդուգն քաղութեան օրինակ և իբր սպացոյց նրա դինուորական ընդունակութիւններին»:

ՏՕԿԻՕ: 3,000,000 մայր ծաւեր կուղարկվին Մանչուրիա. մէկ միլիոնը արգէն ուղարկված է:

ՀՕՆԳԻՕՆԻ: Շոգենակերը հաղորդում են, որ չեն տեսել բալտիկական էսկադրան Կամբանան ծոցում: Տօգօի իշխանութիւնը անհանգստութեան մէջ է և աշխատում է հնարաւոր տեղեկութիւն իմանալ նրա մասին:

ՊՕՐՏ-ԼՈՒԻ: «Ժիւլիէտ» շոգենաւ էկիպոսի պաշտօնանները հաստատում են, որ բալտիկական էսկադրան Կամբանան ծովածոցում մի քանի շաբթ կը մնայ, որովհետեւ կապիտանը (?) հրաման ստացաւ հանդիպել այնտեղ ծովագետ Բօժէսովսկու հետ:

ՇԱԿՉԱՅ: Այստեղ է գտնվում խուզարկու բաժանմունքի զլխաւոր բանակը, որը ուղղութիւն է տալիս բալտիկական էսկադրային Շանգայում դինաթափ եղած «Ասկուր» կրէյտերը ամուս վերցրեց: Այսօր կրէյտերը ներկված է

